

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՐԱՍՄԻ ՀԻՆ ԵՐԿԻ ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ԱՍԱՏՈՒՐ ՄԵԱՑԱԿԱՆՅԱՆ

Ն. Աղոնցը, Նրատարակելով Գիտնխիոս Թրակացու Քերականությունը և նրան նվիրված Նայ հին մեկնությունները, նույն գրքում զետեղել է նաև մի փոքրածավալ հավելված՝ «Արժարժմունի խոնարհմանց բայի» խորագրով¹: Ինչպես Նրատարակողը, այնպես էլ հետագա հետազոտողները՝ Գ. Զահուկյանը², Ա. Մուրադյանը³ և ուրիշներ, բարձր են գնահատել այդ հավելվածը՝ Նեղինակին որոնելով XIII—XIV դդ.: Փորձ է արվել նրան նույնացնելու Ծսայի նշեցու հետ:

Մեր պրպտումներն այդ Նեղինակի մասին նոր տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ տվեցին զգալի արդյունք⁴: Հիմնական նորությունն այն է, որ «Արժարժմունի...» խորագրի տակ առկա է ոչ թե մի փոքրածավալ ու ամբողջական գործ, ինչպես կարծվել է մինչև այժմ, այլ տարբեր փշրանքների մի փունջ: Դրանցից նկատվելու քննվել են սկզբի երկու միավորները՝ նվիրված բայի խոնարհմանը: Ըստ որում, դրանք յիտվել են որպես մի ամբողջություն, անուշադրության մատնելով հաջորդ մյուս փշրանքները՝ արվեստի տեսության և տաղաչափական գիտելիքների մասին: Այս կապակցությամբ ուշադրավ են բոլորովին շնկատված երկու փաստ: Պարզվում է, որ տաղաչափությանը վերաբերող փշրանքին առնչվող մեծարժեք տարբերակ-լրացումներ կան Հայկազյան բառգրքում՝ քաղված միջնադարում տարածված «Եօթնագրեանք» ժողովածուներից: Այս իրողությունը (որ ի դեմս «Արժարժմունի...»-ի ունենք ոչ թե մի ամբողջական գործ, այլ փշրանքների փունջ) հիմք է տալիս պնդելու, որ դրանք Նեղինակը շարագրած է եղել ոչ թե որպես մի փոքրիկ գործ՝ բայի խոնարհման մասին, այլ որպես քերականական մի ամբողջական երկ, որի տարբեր մասերից էլ փրկվել են նշված փշրանքները: Դա էլ իր Ներթին հիմք է տալիս պնդելու, որ ի դեմս դրանց Նեղինակի ունեցել ենք մի այլ քերական, որին չի կարելի նույնացնել Ծսայի նշեցու կամ մի ուրիշ հայտնի քերականի հետ: Պարզվում է նաև, որ այդ անծանոթ քերականին պիտի որոնել ոչ թե XIII—XIV դդ., ինչպես արվել է ցայսօր, այլ ավելի վաղ ժամանակներում, հավանաբար, V—VI դդ., քանի որ նատկապես տաղաչափական փշրանքների ուսումնասիրությունը (բայի խոնարհմանը նվիրված տողերի մասին եղած կարծիքների հետ միասին) օգ-

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. 65—66.

² Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 286—288:

³ Ա. Մուրադյան, Հունարան զպրոցը և նրա զերը հայերենի քերականական տերմինաբանության ստեղծման գործում, Երևան, 1971, էջ 344:

⁴ Այս հոդվածի հիմնական հարցերի մասին զեկուցում ենք կարդացել Մաշտոցի անվան Մատենադարանի 1975 թ. դեկտեմբերի 24-ի գիտական նստաշրջանում:

նում է ավելի ամբողջական պատկերացում կազմելու անձանոթի բերականի ինքնատիպության և նրա բերականական ուղադրով փորձերի վերաբերյալ:

Այժմ ծանոթանանք «Արժարձմունք խոնարհմանց բայի» խորագրի տակ դրսևող բնագրային փշրանքներին:

Առաջին փշրանքը նվիրված է «աղաթել» բայի խոնարհմանը: Այստեղ նկատելի է, որ առկա է սկզբի մասը, իսկ վերջին մասը չի պահպանվել:

Երկրորդ փշրանքը նվիրված է «գոգել» բայի խոնարհմանը: Այստեղ էլ, ընդհակառակը, պահպանված է վերջին մասը և պակասում է սկիզբը: Երկրորդ փշրանքի վերջում կան տողեր, ուր առկա է «երանեալ» բայը, որը, հավանաբար, խոսում է նաև այդ բայի խոնարհման երբեմնի առկայության մասին⁵:

Երրորդ փշրանքը նվիրված է արվեստ հասկացության բնութագրմանը և բաղված է առավել ընդարձակ շարադրանքից: Դավիթ քերականի Մեկնության մեջ նման տողերի հանդիպում ենք Նախերգանում: Համոզվելու համար ստորև ներկայացնում ենք համապատասխան հատվածները:

Դավիթ քերական

Անձանոթ քերական

«Արդ գիտելի է եւ այն, զի բաժանի բանական արուեստ ի շորս. յիմաստասիրութիւն, ի բանական բժշկութիւն, ի քերդողութիւն եւ ի ճարտասանութիւն»⁶:

«Արուեստից բաժանեալ որոշմունք են երեք. իմացական, կրաւորական, արարչական. եւ յիրիցս յայսցանէ խառնք լինին մի: Եւ գործ արուեստականի է երեք լեզուագիտական, մեկնչական, արուեստագիտական»:

Չորրորդ փշրանքը, որն ունի տաղաչափական բնույթ, վերաբերում է հիմնականում «Յաղագս ոտից» հավելվածին⁷: Ահա այն ամբողջությամբ. «Վափ տաղից. ե՛ն, որ վեցթեւեանք են, եւ ե՛ն, որ հինգթեւեան, եւ ե՛ն, որ քառաթեւեան: Եւ թեւք, որով են, վեց. որոց անուանք են այս. լիաթեւ, մատն, մեծաստեղն, նրբաստեղն, մեծառաջ, մեծավերջ: Եւ վեցթեւեան շորիք. լիաթեւ, մատն, մեծաստեղն, մեծառաջն»⁸:

Այսպիսին է «Արժարձմունք խոնարհմանց բայի» խորագրի տակ առկա 4 տարբեր փշրանքների ընդհանուր պատկերը:

Նշեցինք, որ պահպանվել են դրանցից վերջինի չետ առնչվող այլ փշրանքներ ևս: Խոսքը՝ Հայկազյան բառգրքում զետեղված լիարևն և ներա-

⁵ Ծիշտ է, այդ բեկորները ամբողջական տպավորություն են թողնում, սակայն տրամաբանական չէր լինի պնդել. թե դրանց հեղինակը խոնարհման մի ամբողջական ազդուսակի համար ընտրել է տարբեր բայեր: Դա հետագայի կրճատումների արդյունք է, ուր միմյանց են կցվել ինչպես մի քանի բայերի խոնարհման ազդուսակի, այնպես էլ ուրիշ նյութերի տարրեր մասերը:

⁶ Н. Адонц, նշվ. աշխ., էջ 32:

⁷ Նույն տեղում, էջ 56. Ն. Աղոնցի Նրատարակության մեջ առկա է նաև «Յաղագս արուեստի» հավելված (էջ 42), որը, սակայն, բաղված է Ն. Աղոնցի ձեռքով՝ Դավիթ քերականի նախերգանից և զետեղված այդտեղ: Այն առնչություն չունի անձանոթ քերականի վերոհիշյալ տողերի հետ:

⁸ Նույն տեղում, էջ 43—44:

⁹ Նույն տեղում, էջ 56 (կետադրությունը մասամբ վերանայել ենք):

ստեղծել Բաբելոնի քաղաքացիական համար «Ծօթնադրիանք» կոչվող հին ձև-
նագրերից քաղված վկայությունների մասին է Ահա դրանք.

ա) Լիաթեն Բաբի քաղաքացիական մեջ. «Չափք տաղիցն՝ են վեցթեւեան
եւ են հինգթեւեան. լիաթեն, որ են վեցթեւեան: Լիաթեն յերկուց երկարաց
չորեքժամեան»¹⁰:

բ) Նրբաստեղն Բաբի քաղաքացիական մեջ. «Յերկուց երկարաց չորեք-
ժամեան: Նրբաստեղն հինգժամանակեան, որպէս Ամբակումն է տիպ իւրա-
քանչիւր տաղիցն»¹¹:

Այս հատվածների մի ամբողջությունից քաղված լինելը երևում է առա-
ջին հատվածի վերջում և երկրորդ հատվածի սկզբում կրկնվող հետևյալ Բա-
ներից. «յերկուց երկարաց չորեքժամեան»: Ուստի, այդ երկու հատվածները
կցելով միմյանց (առանց նշված բառերը կրկնելու), ստանում ենք Ն. Ադոնցի
տպագրած տաղաչափական հատվածի մի ուշագրավ տարբերակ-լրացումը:
Ահա այդ հատվածները.

Ն. Ադոնցի տպագրածը
(A տարբերակ)

Հայկազյան բառգրքում տպագրվածը
(B տարբերակ)

«Չափ տաղից. ե՛ն, որ վեցթեւեանք
են, եւ ե՛ն, որ հինգթեւեան, եւ է՛ն,
որ քառաթեւեան: Եւ թեւք, որով են՝
վեց, որոց անուանք են այս. լիաթեն,
մատն, մեծաստեղն, նրբաստեղն,
մեծառաջ, մեծավերջ: Եւ վեցթեւեան
չորիք՝ լիաթեն, մատն, մեծաստեղն,
մեծառաջն»:

«Չափ տաղիցն՝ են վեցթեւեան, եւ
են հինգթեւեան. լիաթեն, որ են վեց-
թեւեան: Լիաթեն երկուց երկարաց,
չորեքժամեան. նրբաստեղն հինգժա-
մանակեան, որպէս Ամբակումն է տիպ
իւրաքանչիւր տաղիցն»:

Մեր կարծիքով, այս 2 հատվածների երբեմնի մոտավոր պատկերը հե-
տևյալն է.

1. «Չափ տաղից. ե՛ն, որ վեցթեւեանք են, եւ ե՛ն, որ հինգթեւեան, եւ
ե՛ն, որ քառաթեւեան:

2. Եւ թեւք, որով են՝ վեց, որոց անուանք են այս. լիաթեն, մատն, մե-
ծաստեղն, նրբաստեղն, մեծառաջ, մեծավերջ:

3. Եւ վեցթեւեան չորիք՝ լիաթեն, մատն, մեծաստեղն, մեծառաջն:

4. Լիաթեն, որ են վեցթեւեան:

5. Լիաթեն՝ յերկուց երկարաց, չորեքժամեան. նրբաստեղն հինգժամա-
նակեան, որպէս Ամբակումն է տիպ իւրաքանչիւր տաղիցն»:

Այսպիսով, ստանում ենք 5 պարբերություն. 1-ինը ըստ AB օրինակ-
ների, 2—3-րդը՝ ըստ A օրինակի, իսկ 4—5-րդը՝ ըստ B օրինակի:

Իրերի ներկա դրությամբ դժվար է ճիշտ պատկերացնել, թե այդ պար-
բերություններից յուրաքանչյուրը և դրանց ամբողջությունը որքանով է պա-
կասավոր ու աղավաղված: Սակայն անվիճելի է, որ այդտեղ, իրոք, առկա է
մեծ պակասավորություն: Այսպես, օրինակ, առաջին պարբերության մեջ
նշված են վեցթեւեան, հինգթեւեան և քառաթեւեան ոտանավորները. դրանցից

¹⁰ «Նոր բառգիրք Հայկազյան լեզվի», Ա, Վենետիկ, 1836, էջ 885:

¹¹ Նույն տեղում, Բ, Վենետիկ, 1837, էջ 455:

բացատրված է լուկ վեցթևյանը (3-րդ պարբերություն), այն էլ՝ ոչ ամբողջապես, իսկ հինգթևյանի ու քառաթևյանի մասին ոչ մի խոսք չկա: Պարզ է, որ դրանք ևս ժամանակին պիտի բացատրված լինեին: Նույնը կարելի է ասել 4-րդ և 5-րդ պարբերությունների մասին:

Ուշագրավ է նաև «Արժարձմունք խոնարհմանց բայի» խորագրի հարցը: Այժմ, երբ ավելի մոտիկից ծանոթացանք նրա տակ գտնվող նյութերին, կարող ենք ասել, որ այն համապատասխանում է լուկ դրանց սկզբի 2 հատվածին: Երևում է, որ տաղաչափական բեկորներն էլ ունեցել են այլ խորագրի՝ պահպանված «Չավի տաղից» ձևով: Երբ, սակայն, տպագրության ժամանակ չի դիտվել որպես այդպիսին:

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2365 ձեռագրում կա ուշագրավ մի ուրիշ փաստ ևս: Այնտեղ պահպանվել է ն. Աղոնցի հրատարակած «Արժարձմունք...»-ի մի տարբերակ, որն ունի անմիջական շարունակություն. «Իսկապէս իմաստութեանն փառաւորեալ սուրբ Երրորդութեանն փառք, պատիւ, գոհութիւն, գովութիւն այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից» (թերթ 26 ր): Ինչպես տեսնում ենք, դրանք հիշատակարանային վերջին, փառաբանական տողեր են, որոնց սկզբի մասը, այսինքն՝ բուն հիշատակարանը չկա: Գուցե և դրանք գրչին վերագրվեին, ի՞նչ դրանց չհաջորդեր գրչի ամբողջական և անկախ հիշատակարանը: Ուստի, հիմք է առաջանում մտածելու, որ այդ հիշատակարանային հատվածն էլ է գալիս անծանոթ քերականի երկից:

Ահա այն փաստերը, որոնք ներառվածություն են տալիս պնդելու, թե անծանոթ հեղինակից պահպանվել է ոչ թե մի փոքրածավալ ու ամբողջական գործ՝ նվիրված բայի խոնարհմանը, այլ մի քանի քերականական հատվածներ (բերևս նաև հիշատակարանային տողեր), որոնք ենթադրում են համապատասխան ծավալուն երկ և ինքնուրույն հեղինակ:

Ն. Աղոնցը, հրատարակելով «Արժարձմունք...»-ը, նկատել է, որ այն (բայի խոնարհման մասով) շարադրված է ի հեճուկս «կոփել» բայի խոնարհման աղյուսակի: Վերջինս, ինչպես հայտնի է, հունամուլական մի արտաոց ծայրահեղություն է, որի թարգմանիչը, ըստ ն. Աղոնցի դիտողության, «հաշվի չնստելով ոչ հայերենի խոնարհման կանոնների և ոչ էլ ոգու հետ, աղավաղում է լեզուն, կոտրելով այն հօգուտ հունական ձևերի»¹²:

Ահա այս բայի դեմ է, որ ժամանակին բողոքել է «Արժարձմունք...»-ի հեղինակը. միաժամանակ տալով բայի խոնարհման նոր օրինակներ: Ուշագրավ է, որ նա այդ օրինակներից հետո զետեղել է իր վճռական եզրակացությունը՝ հետևյալ ձևակերպումով. «Այս է աւարտումն խաւսից, ապա եթէ ըստ բաշաղմանց արտաբնոց եւ ըստ բաւսանաց իւրոց մտաց որ ընթանայցէ, ի միում յանբերելոթ անցեալսն զաւանէ բիւր մասունս վվաղանցեալսն եւ առժամ մի եւ զմիւս եւս եւ յամենայն եւ ներկայս եւ յապառնիս եւ ի մասունս նոցա գտանն հազար յեղանակս զաւղտնչմանց: Այլ մեր սանձա՛րեալ զերիվար մտաց յարինեսցուք զասպարէզս իմաստից և առցուք զնպատակն ճշմարտութեան»¹³:

Անծանոթ հեղինակի այս եզրակացությունը մի կողմից ուղղված էր երևակայական ավելորդաբանությունների, իսկ մյուս կողմից՝ օտարամուլության դեմ:

¹² Н. Адопц, Եզվ. աշխ., էջ CLXXXI.

¹³ Նույն տեղում, էջ 66:

ն. Ադոնցը, նկատի առնելով այս տողերի առողջ ոգին, գրում է, որ նրա հեղինակի կողմից «կոփել» բայի խոնարհման աղյուսակում իշխող «այդ բոլոր կամածին կազմութիւնները կոչվում են ցնգաբանութիւն—բաջաղմունք և խորհուրդ է տրվում «սանձահարել երևակայութեան նժույզը» և մնալ իրականութեան սահմաններում»¹⁴:

Անձանոթ քերականը, ըստ երևույթին, այդ ոգով ու մոտեցմամբ է գրել իր երկի նաև մյուս մասերը: Դրա ապացույցներին հանդիպում ենք արվեստի և տաղաչափութեան հարցերին վերաբերող վերոհիշյալ փշրանքներում: Համոզվելու համար անցնենք տաղաչափական բեկորներում շոշափված խնդիրների մի մասի քննութեանը: Այստեղ հեղինակն աչքի է ընկնում իր մշակած նոր տերմիններով, որոնք վերաբերում են տաղերի, ամանակների և ոտների տեսակներին: Այսպես, տաղերի տեսակների համար պահպանվել են վեցընչյան, հինգընչյան, փոքրընչյան տերմինները: Նորութիւնն այստեղ թե հասկացութիւնն է՝ առաջարկված ոտ-ի փոխարեն: Ըստ այսմ, նշված նոր տերմիններին համապատասխանում են վեցոտնչյա, հնգոտնչյա և փոքրոտնչյա հին տերմինները:

Ամանակների տեսակների համար անձանոթ քերականի մշակած տերմիններից պահպանվել են փոքրոտնչյան և հինգոտնչյան: Նորութիւնն են ժամյան կամ ժամանակյան տերմինները՝ առաջարկված ամանակի փոխարեն:

Առավել ուշագրավ են տաղաչափական ոտների տեսակներին վերաբերող նորամշակ տերմինները. լիաթեն, մատն, մեծաստեղն, նրբաստեղն, մեծառաջ, մեծավերջ: Քանի որ դրանք կապվում են 'Իավիթ քերականի մշակած տերմինակարգի հետ, ուստի նախ բերենք այս վերջինն՝ իր ամբողջութեամբ, աղյուսակի տեսքով:

Ձև Ը Կ	Ոտքերի անունները (տերմինները)	Տաղաչափական սխեման	Իստական ոտքերի օրինակներ	Ամանակների քանակը
1	Համբոյր	— —	Մաշ-գոյ	4
2	Մեծասար	— —	Դաւ-իթ	3
3	Մեծավերջ	— —	Կոր-իւն	3
4	Անգայտ	— —	Ե-նոք	3
5	Ստեղն	— — —	Ար-բա-համ	4
6	Վերջատանջ	— — —	Սո-դո-մովն	4
7	Դողարորբ	— — —	Ամ-բա-կում	5
8	Ողաղօտ	— — —	Փի-դիա-աոս	4
9	Հաւեղ	— — —	Ոտի-սէ-պոս	5
10	Աւարտեղ	— — —	Ստե-փա-նոս	5
11	Ներգե	— — —	Ի-սա-հակ	3
12	Սոնք	— — —	Յով-հան-նէս	6

¹⁴ Նույն տեղում, էջ CLXXXI:

Արգ, ի՞նչ իմաստ ունեն լիարևն, մատն, մեծաստեղն, ներաստեղն, մեծառաջ և մեծավերջ տերմինները: Դրանցից մեկը՝ մեծավերջը, որ ժանոթ է Դավիթ քերականի համակարգից, վերոհիշյալ աղյուսակի երրորդ տերմինն է՝ — սխեմայով: Իսկ թե ինչպե՞ս պիտի որոշել մնացածներից յուրաքանչյուրի ինչ լինելը, դրան կարող է օգնել Դավիթ քերականի մշակած և հունարենից հկող վերոհիշյալ աղյուսակի ներքին կառուցվածքում առկա հսկիտունյա զույգերի օրինաչափությունը: Խոսքը տաղաչափական սխեմայի յուրատեսակ հաջորդականության մասին է: Այն հետևողականորեն ընթանում է միանման, բայց հակառակ կառուցվածք ունեցող ամանակային զույգ արժեքների հաջորդականությամբ: Օրինակ, 2—3-րդ միավորների սխեման ունի հետևյալ պատկերը.

— ∪ (մեծասար)
 ∪ — (մեծավերջ):

5—6-րդ միավորների սխեման այլ է, բայց նորից ներքին համանման օրինաչափությամբ.

— ∪ ∪ (ստեղն)
 ∪ ∪ — (վերջատանջ):

Եթե առաջին օրինակում միմյանց զուգակցում են մեկ երկար և մեկ սուղ (— ∪), հետո՝ մեկ սուղ և մեկ երկար (∪ —) ոտքեր, ապա երկրորդ դեպքում միմյանց զուգակցում են մեկ երկար և երկու սուղ (— ∪ ∪), հետո՝ ընդհակառակը՝ երկու սուղ և մեկ երկար (∪ ∪ —) ոտքեր: Այդպես են նաև մյուսները: Ցայտուն օրինակ է վերջին զույգը.

∪ ∪ ∪ (ներգև)
 — — — (սոնք):


Հակոտնյա զույգերի կապակցությամբ ուշագրավ է Ծսայի նշեցու մի դիտողությունը, որի համաձայն «են սոքա ընդիմակք միմեանց՝ անուամբ և ամանակաւ»: Ասլա բերում է օրինակներ. «տե՛ս և զանգայտն, որ զերկուսին փաղառութիւնն հաւասար կարճ ունի վասն բնութեամբ սղիցն, ըստ որում ընդդէմ պտանի, որ երկու վանդին երկայն լինին, որպէս համրոյրն»¹⁵: Ահա դրանց սխեման.

∪ ∪ (անգայտ)
 — — (համրոյր):

Հետևելով այս օրինաչափությանը, անձանոթ հեղինակի համակարգի մեծավերջ տերմինի հակոտնյա զուգակիցը, բնականաբար, պիտի փնտրենք նրա հարևանությամբ: Այստեղ հանդիպում ենք մեծառաջ տերմինին: Եվ եթե մեծավերջը մեծ (երկար) վերջ է ենթադրում, ապա մեծառաջը՝ մեծ (երկար)

¹⁵ Ծ ս ա ս ի ն շ ե ց ի, վերլուծություն քերականության, աշխատասիրությամբ Լ. Խաչիբյանի, Իրևան, 1966, էջ 183—184:


սկիզբ: Դա միանգամայն ներդաշն է հակոտնյա զույգերի օրինաշափուխներ: Ուստի այս զույգի սխեման կունենա հետևյալ տեսքը.



Ուշագրավ է, որ քերականների մոտ երբեմն հանդիպում ենք համապատասխան արձագանքների: Օրինակ, Վարդան Արևելցին մեծասարն անվանում է նաև մեծասկիզբ. «Մեծասարն մեծասկիզբն ասի, որ սկիզբն երկայն է»¹⁶, Նույնպիսի տվյալ կա նաև Նսայի Նշեցու մոտ. «Մեծասարն, որ է մեծասկիզբն»¹⁷:

Այսպիսով, պարզվում է, որ անծանոթ քերականի մշակած համակարգում հանդիպող մեծառաջ տերմինը համապատասխանում է մեծասարին, որը կոչվել է նաև մեծասկիզբ: Նկատենք, որ այդ անվանումն առավել հաջողված է, որովհետև հնչյունա-իմաստային առումով մեծառաջը ավելի հարագատու մոտ է մեծավերջին, քան մեծասարը կամ մեծասկիզբը:

Մյուս շորս տերմիններից դյուրին է նախ բացատրել լիաթևն և մատն տերմինների էությունը, որովհետև դրանցից առաջինը բացատրում է հենց հեղինակը. «Լիաթևն՝ յերկուց երկարաց, շորեքժամեան»¹⁸, այսինքն՝ լիաթևը տաղաշափական հասկացություն է և նկատի ունի երկու երկար վանկանոց ու բառամանակ (աշորեքժամեան) ոտը: Մա միանգամայն համապատասխանում է դավթյան համակարգի համբույր տերմինին: Ուշագրավ է, որ համանման մեկնաբանություն կա Մովսես Քերթոզի քերականության մեջ: Այստեղ համբույրի մասին ասված է, թե ունի երկու վանկ, «երկուքն եւ երկարք լիադիծք, քառամանակ»¹⁹, հոսքը լիազիծք բառի մասին է. այն իր առաջին կեսով համընկնում է լիաթևին և իմաստով համապատասխանում նրան: Ինչպես տեսնում ենք, անծանոթ քերականի այս ուղղումը ևս առավել իմաստավոր է, քան Դավիթ քերականի համընդունը: Ինչ վերաբերում է մատն տերմինին, ապա որպես լիաթևնի հակոտնյա զուգակից, այն պիտի ունենա երկու սուղ վանկից բաղկացած կառուցվածք: Այդպիսին է դավթյան համակարգի անգալտը: Եվ, իրո՞ք, հենց այդ տերմինն էր, որ սպասում էր իր համարժեքի բացահայտմանը՝ անծանոթ քերականի համակարգում: Ըստ այդմ, սույն զույգի սխեման կլինի.



Թե ինչ է նշանակում մատն բառն այս գործածության մեջ²⁰, դժվար է ասել: Ըստ երևույթին, այն ևս ավելի պատշաճ է համարվել, քան անգալտը:

16 Վ ա Ր Պ ա ն Ա Ր Ե Լ Կ Ի, Մեկնություն քերականի, Երևան, 1972, էջ 161.
 17 Ն ս ա յ ի Ն շ Ե ց ի, նշվ. աշխ., էջ 184.
 18 Ե ն ո Ր Բ ա ո Պ ի Ր Ս հայկազյան լեզվի, Ի, էջ 885.
 19 Մ. Ա Ճ Օ Ո Ւ Վ, նշվ. աշխ., էջ 178.
 20 Մատենադարանի № 5066 ձեռագրում կա տպագիր քարտեզի մի բեկոր, ուր «մատն» բառով նշված են հորիզոնական գծերը:

Առայժմ որոշ դժվարություն է հարուցում մեծաստեղն և նրբաստեղն հակոտնյս՝ զույգի բացատրությունը: Բանն այն է, որ այստեղ մշակված են երկու նոր տերմիններ, որոնց հիմքում դրված է «ստեղն» (ոստ, թև, ճյուղ) հասկացությունը: Այս հասկացությունն առանձին վերցրած առկա է դավթյան

համակարգում (ստեղն — Ս Ս, Աբ-բա-համ), Եթև ընդունենք, որ անձանոթ քերականի մշակած նոր տերմինները վերաբերում են ստեղնին և նրա զուգակցին՝ վերջատանջիս, ապա կարող ենք զուշակել դրանց սխեման.

— Ս Ս (մեծաստեղն)

Ս Ս — (նրբաստեղն):

Հստ իմաստի էլ սա կհամապատասխաներ մշակված տերմինների լիզվամտածողության նդանակին: Սակայն մենք առայժմ այս բացատրությունը վերջնական համարել չենք կարող, որովհետև անձանոթ քերականի մոտ առկա է այլ բացատրություն: Խոսքը հետևյալ տողերի մասին է. «նրբաստեղն հինգժամանակեան, որպես Ամբակումն է տիպ իւրաքանչիւր տաղիցն», Եթև այս նախադասությունը ճիշտ է և աղավաղված չէ, ապա կունենանք հետևյալ սխեման.

— Ս — (նրբաստեղն)

Ս — Ս (մեծաստեղն):

Իսկ սա համապատասխանում է Բողարոբ (Ամ-բա-կում) և Բողարու

(Փի-դիպ-պոս) տերմիններին:

Այսպիսով, անձանոթ քերականի մշակած տաղաչափական ոտքերի վեց տերմիններից շորսը (լիաթեն, մատն, մեծառաջ, մեծավերջ) համապատասխանում են դավթյան համակարգի երկվանկ ոտքերին, իսկ երկուսը (մեծաստեղն, նրբաստեղն)՝ եռավանկ: Հավանաբար, նա դավթյան համակարգի եռավանկ մյուս վեց ոտքերի համար ևս մշակել է նոր տերմիններ, որոնք, սակայն, չեն պահպանվել: Ասենք, որ քննվող բեկորներում առկա է ոչ թե անձանոթ քերականի մշակած համակարգի մի ամբողջական հատվածը, այլ նրա հիման վրա կատարված մեկնաբանությունների մի հատված՝ կապված տաղատեսակների հետ: Ենթադրելի է, որ պահպանված «Զափ տաղից» խորագրից առաջ պիտի եղած լիներ «Յաղագս ոտից» բաժինը:

Անձանոթ քերականի տաղաչափական վերոհիշյալ բեկորների քննությունը օգնում է գաղափար կազմելու դավթյան համակարգում առկա որոշ շփոթությունների մասին: Այսպես, օրինակ, անձանոթ քերականի մոտ լիաթեն և մատն տերմինները թվարկված են միասին՝ որպես հակոտնյա զույգի անդամներ: Եվ դա միանգամայն ճիշտ է: Դավթյան համակարգում, սակայն, դա այդպես չէ: Այնտեղ առկա է աղաղակող խախտում, որովհետև դրանց համապատասխանող զույգը բաժանված է մեծաուար և մեծավերջ զույգով. ուստի համբույրը գտնվում է առաջին, իսկ անգայտը՝ շորորդ տեղում:

Ն. Ադոնցը, հրատարակելով այդ համակարգի բնագիրն ու Դավթի թարգմանությունը, չէր կարող չնկատել նշված խախտումը: Սակայն նա էլ չի շտկել: Այն, որովհետև սխալը դարավոր պատմություն ու կիրառություն ու-

ներ: Ն. Ադոնցը գտնում է, որ այդ սխալի արձատները պիտի որոնել հունական բնագրում, որից օգտվել է Դավիթ քերականը²¹, Ջարմանալի է, որ բացի անծանոթ քերականից հայ հին և միջնադարյան մեկնիչներից և ոչ մեկը չի նկատել դա: Լոկ Ե. Նչեցու երկում ենք հանդիպում մի նախադասության, ուր որպես հակոտնյա զույգ հիշված են դավթյան համակարգի անգայտ և համբոյր ոտքերը, սակայն նա էլ ոչինչ չի ասել դավթյան համակարգում դրանց սխալ տեղադրման մասին²²: Ըստ երևույթին, անծանոթ քերականը կամենալով վերանայել առկա թարգմանության մեջ կիրառված սկզբունքները, օգտվել է հունական առավել անթերի բնագրից, ուր համբոյր և անգայտ կամ լիաթև և մատն տերմինները գտնվելիս են եղել միմյանց մոտ: Հետագայի մասնագետներն էլ, իրենց հերթին, որպես կանոն, ուշադրություն չեն դարձրել այդ աղավաղման վրա և օգտվել են դավթյան համակարգից որպես անթերի բնագրից՝ թույլ տալով սխալներ: Նման սխալներ է թույլ տվել նաև Ա. Մուրադյանը՝ իր մեծարժեք աշխատության մեջ, թեև փորձել է կատարել շտկումներ²³:

Բացատրելով անծանոթ քերականի մշակած տերմինները, հնարավորություն է ստեղծվում ճշգրտելու բառարաններում տեղ գտած դրանցից երկուսի մեկնաբանությունները: Այսպես, Հայկազյան բառգրքում, ինչպես ասացինք, հանդիպում ենք լիաթև և ներաստեղն բառերին: Այնտեղ լիաթևն ասացել է այսպիսի բացատրություն. «Երբալ բազմութեամբ թևոց»²⁴, որն ըստ էության սխալ է, որովհետև լիաթևը՝ համբոյրն է բաղկացած երկու հավասարազոր (երկար) թևերից (իմա՝ ոտքերից): Լիաթևն բառը բացատրել է նաև Ստ. Մալխասյանցը. «Ի՞նչը թևերով, լիակատար թևերով»²⁵: Այստեղ էլ վերստին իշխում է շփոթ և չի տրված տերմինի իսկական բացատրությունը:

Գալով ներաստեղնի բացատրությանը, պիտի ասել, որ Հայկազյան բառգրքում նրա մասին ասված է. «որոյ ստեղն է նուրբ, և ըստ քերականաց՝ անգայտ. և հաւեղ կամ աւարտեղ»²⁶: Ստ. Մալխասյանցը փորձում է պարզություն մտցնել այդ բացատրության մեջ, բայց նորից հանդում է ոչ ճիշտ ելքակացության՝ ներաստեղնի տակ նկատի առնելով հաւեղ հասկացությունը: «Ներաստեղն... — գրում է նա, — հին հունական տաղաչափության մեջ հավեղ, հինգ ամանակով եռավանկ բառ, որի առաջին երկու վանկերը երկամանակ են, իսկ վերջինը միամանակ»²⁷: Սա ճիշտ չէ, որովհետև, ինչպես տեսանք, ներաստեղնը կա՛մ վերջատանջն է՝ Ս Ս — սխեմայով, կա՛մ էլ Գոդաղոտը՝ — Ս — սխեմայով:

Բառարաններում մենք չհանդիպեցինք Խասն, մեծաստեղն և մեծառաջ տերմիններին:

Այսպիսով, անծանոթ քերականից պահպանված տաղաչափական փշրանքում գործ ունենք երեք խմբի տերմինների հետ.

21 Н. Адонц, *Узв. азбу.*, էջ XLVI—XLVII:

22 Ե ս ա յ ի ն շ ե ճ ի, *Նշվ. աշխ.*, էջ 184:

23 Ա. Մուրադյան, *Նշվ. աշխ.*, էջ 164—165:

24 «Նոր բառգիրք հայկազյան լեզվի», Ա, էջ 885:

25 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Բ, Երևան, 1944, էջ 197:

26 «Նոր բառգիրք հայկազյան լեզվի», Բ, էջ 455:

27 Ստ. Մալխասյանց, *Նշվ. աշխ.*, Գ, Երևան, 1944, էջ 488:

ա) Տերմիններ տաղերի տեսակների համար

Վեցթևեան (իմա՝ վեցոտնյա)
 Հինգթևեան (իմա՝ հինգոտնյա)
 Քառաթևեան (իմա՝ քառոտնյա):

բ) Տերմիններ տաղաչափական ամանակների համար

Քառաժամեան (իմա՝ քառամանակ)
 Հինգժամանակեան (իմա՝ հնգամանակ):

գ) Տերմիններ տաղերի ոտների համար

Լիաթևն (իմա՝ համբոյն)
 Մատն (իմա՝ անդայտ)
 Մեծաստեղն (իմա՝ կամ ստեղն, կամ քողարորբ)
 Նրբաստեղն (իմա՝ կամ վերջատանջ, կամ քողաղոտ)
 Մեծառաջ (իմա՝ մեծասար)
 Մեծավերջ (իմա՝ մեծավերջ):

Հավանաբար, անծանոթ քերականի ամբողջական աշխատության մեջ նման տերմինների թիվն անհամեմատ մեծ է եղել, քանի որ նոր տերմիններն առատ են նաև նրա «Արժարձմունք...»-ի խոնարհման մասում:

Այսպիսով, անծանոթ քերականը թե՛ բայի խոնարհման հարցում, թե՛ տաղաչափական գիտելիքներում ցուցաբերել է բոլորովին նոր ու ինքնուրույն մոտեցում՝ ձգտելով էական փոփոխությունների: Նույնը կարելի է ասել նաև արվեստի մասին նրա դատողությունների վերաբերյալ, որոնք, սակայն, խիստ կցկտուր լինելով՝ հիմք չեն տալիս ծավալվելու:

Այս ընդհանուր տեղեկությունների հենքի վրա այժմ ավելի քան հետաքրքրական է այն հարցը, թե ո՞վ է եղել և ե՞րբ է ապրել անծանոթ քերականը:

Ն. Աղոնցը հավանական է համարել «Արժարձմունք...»-ի հեղինակին նույնացնելը Ե. Նչեցու հետ²⁸, Դ. Ջահուկյանը, իրավացիորեն առարկելով նրան, միաժամանակ գտնում է, որ անծանոթ քերականը եղել է Ե. Նչեցու ժամանակակիցներից մեկը՝ ապրած XIII—XIV դդ.²⁹, Ա. Մուրադյանը համաձայն է Ն. Աղոնցի հետ և «Արժարձմունք...»-ը բնում է որպես Եսայի Նչեցու գործ³⁰, Սպասելի էր, որ այս հարցին պատշաճորեն անդրադարձած իրենք Լ. Խաչերյանը՝ Ե. Նչեցու քերականությունը հրատարակելիս և նրա ընդարձակ ներածականը շարադրելիս³¹, ուր, սակայն, ակնարկ անգամ չկա «Արժարձմունք...»-ի և նրան առնչվող կարծիքների մասին: Ինչպես երևում է, նա անտեղյակ է այդ փաստերին: Այսպես ասելու հիմք են տալիս նրա նե-

28 Н. Агонц. Уշվ. աշխ., էջ СІ.ХХХІ, 65:

29 Կ. Ջահուկյան, Уշվ. աշխ., էջ 286—287:

30 Ա. Մուրադյան, Уշվ. աշխ., էջ 344:

31 Եսայի Նչեցու, Уշվ. աշխ.:

բաժնիքի աշխատողները³², ուր նա հակադրվում է Գ. Զահուկյանին, շնկատելով, որ վերջինս նկատի ունի հենց «նշեցուն վերագրված խոնարհման աղյուսակը...»³³:

Անդրադառնալով անձանոթ քերականի և Ծ. Նշեցու առնչությանը, մենք, վերը շարադրվածի հիման վրա, բացառված ենք համարում նրանց նույնացման հնարավորությունը: Բացառված պիտի համարել նաև անձանոթ քերականին XIII—XIV դդ. որոնելու հնարավորությունը: Այս վերջին հարցում միակ լուրջ կոպանը՝ անձանոթ քերականի և Հովհաննես Մործորեցու բայի խոնարհման խնդրում ունեցած համանման մոտեցումն է, որի վրա ուշադրություն է դարձրել Գ. Զահուկյանը³⁴: Սակայն, նա, շունենալով այն ամբողջական գիտակերպումը, որ ստեղծվում է այժմ անձանոթ քերականի մասին, հավանական է համարել Հովհաննես Մործորեցուն առաջնադաս նկատելու ենթադրությունը, անձանոթ քերականին դիտելով որպես նրան հետևող XIII—XIV դդ. մի այլ քերական: Նման մոտեցումը պետք է վերանայվի, որովհետև անձանոթ քերականը, ինչպես ասացինք, շատ ավելի վաղ ժամանակների (հավանաբար V—VI դդ.) հայ հեղինակներից մեկն է եղել: Այս առումով առաջին հավաստի փաստն այն է, որ Հովհաննես Մործորեցու ժամանակներում անձանոթ քերականի երկը ոչ թե նոր էր շարադրվել, այլ վաղուց արդեն կորած էր և նրանից հայտնի էին միայն փշրանքներ: Այդ են վկայում, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 6837 և 2365 ձեռագրերը, որոնցից առաջինն ընդօրինակված է 1317 թ., իսկ երկրորդը՝ XIV դ.: Նույնը կարելի է ասել նաև Վենետիկի մխիթարյան միաբանության Մատենադարանի №№ 174 և 336 ձեռագրերի մասին. առաջինը ընդօրինակված է 1342 թ., իսկ երկրորդը՝ 1360 թ.: Բուլոբի մեջ էլ անձանոթ քերականից պահպանված են լուկ Ն. Աղոնցի տպագրած հատվածները, մինչդեռ վերոհիշյալ № 2365 ձեռագրում Հովհաննես Մործորեցին հանդիպում է ամբողջական բնագրով:

Պակաս ուշադրավ չէ լեզվի պարագան: Ինչպես բնական էր սպասել, անձանոթ քերականը գրել է դասական դրաբարով, մինչդեռ Հովհաննես Մործորեցին՝ ժամանակի խոսակցական լեզվով: Տերմիններն էլ առաջինի մոտ անհամեմատ հնաբույր են:

Անձանոթ քերականի ապրած ժամանակը որոշելու առումով անհրաժեշտ է անդրադառնալ նաև Հովհաննես Երզնկացու (Պլուզի և ոչ թե Հովհաննես Մործորեցու) կազմած քերականության հիշատակարանին, որը մեր հին քերականական աշխատությունների մասին ընդհանուր տեղեկություններ

³² Նույն տեղում, էջ 39:

³³ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 286: Գ. Զահուկյանի և Լ. Խաչերյանի՝ Եսայի Նշեցու և երկու Հովհաննես Երզնկացիների գրած քերականությունների ժամանակի հարցը պարզելու համար կարելի է ուշադրություն հրավիրել վերջերս տպագրված հետևյալ տողերի վրա. «...Վերական բազումք, բայց յետոյ՝ Յոնանևնև Լիզնկացին, յետ նորա՝ Եսային ՉժԸ (1269) քվին. յետ նորա Յոնանևնև Մործորեցին...» («Բանբեր Մատենադարանի», № 11, 1973, էջ 369, ժՁ դ. ձեռագրից): Նշենք, որ Եսայի Նշեցու քերականությունը համարվել է «1307 թվականից առաջ գրված գործ (Եսայի Նշեցու, նշվ. աշխ., էջ 4): Որքանով է ճիշտ ՉժԸ (1269) թվականը, մնում է ճշգրտման կարոտ, մասնավորապես, որ Հովհաննես Երզնկացու (Պլուզի) քերականությունը դիտվում է որպես 1291 թ. ավարտված գործ (Է. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 27):

³⁴ Գ. Զահուկյան, նշվ. աշխ., էջ 286—287:

ուարունակող առաջին հավաստի աղբյուրն է: Այստեղ նա նշում է, որ իր ձեռքի տակ եղել է մի հին ժողովածուից կատարված ընդօրինակություն. «յորում էր Դավթի Փիլիսոփային և Մովսիսի Քերթովին և այլ Գ մեկնիչս առանց անուան մեկնողին. էր ի նմա և Բարսղի մեկնութիւն»: Այնուհետև նա շարունակում է. «Գտայ և յանապատն Դերջնա զՀամամայ Արևելից վարդապետի մեկնութիւնն. այլ և ի Բառագրոցն Լորսոսակիսի, յայտոցիկ մեկնողաց գրոց, այլ և աստի և անտի լուծումն բանից արարեալ մերոց իմաստնոց: Եւ էր զոր յայլ իմաստասիրական գրոց զյարմարն և զղէպն և զնմանն բերեալ եղաք ընդ համազարի բանին և յայսցանէ ամենեցունց արարաք զմեկնութիւնս զայս»³⁵: Հովհաննես Երզնկացին հատուկ բացատրությամբ խոսում է նաև Գրիգոր Մագիստրոսի մեկնության մասին:

Ն. Աղոնցը, հանգամանորեն քննելով այս տվյալները և Հովհաննես Երզնկացու բազմադրյալ քերականական մեկնությունը, յանգում է այն եզրակացության, թե վերոհիշյալ հիշատակարանում նշված հեղինակներից բացի, Հովհաննես Երզնկացին միջնորդաբար օգտագործել է նաև Դավթի, Անանուն-Մամբրեի և Ստեփանոս Սյունեցու աշխատությունները, բայց դրանք չի նշել³⁶: Հարց է առաջանում, ինչո՞ւ Հովհաննես Երզնկացին չի հիշել այդ հեղինակներին կամ նրանց երկերը: Զէ՞ որ անհնար կլիներ օգտվել նրանցից և չնկատել դրանց առանձին, թեև ուղի անանուն գործեր լինելը: Պարզվում է, որ նա իրոք հիշել է նաև այդ երեք աշխատությունները, միայն թե նրան հիշտ չեն ընկալել և՛ Ն. Աղոնցը, և՛ հաջորդ մասնագետները: Այսպես ասելով՝ նկատի ունենք վերոհիշյալ հիշատակարանի «և այլ Գ մեկնիչս առանց անուան» դարձվածքը, ուր ասված է, թե օգտագործված են նաև երեք ուրիշ մեկնիչներ առանց հեղինակների անունների: Ն. Աղոնցը, սակայն, այդ Գ-ն ընդունել է ոչ թե երեք հեղինակի փոխարեն, այլ՝ երրորդի, այսինքն՝ մեկ հեղինակի փոխարեն («и еще третьего толкователя без имени автора»)³⁷: Այդ Գ-ն կարող էր երրորդ հասկացվել, եթե հեղինակը համարակալած լիներ նաև մյուս երկերը, սակայն դրանցից ոչ մեկը համարակալված չէ և առհասարակ էլ նրա թվարկման ձևը համարակալում չի ենթադրում: Ահա հենց այդ Գ (3) աղբյուրներն էլ եղել են Դիոնիսիոս Քրականացու, Անանուն-Մամբրեի և Ստեփանոս Սյունեցու երկերը: Պարզ է, որ այստեղ մենք չենք կարող որոնել մեր հեղինակին, սրովհետև նրանց երկերը պահպանվել են, իսկ դրանք ոչ մի կապ չունեն անանուն հեղինակի փրկված բեկորների հետ:

Հովհաննես Երզնկացու հիշատակարանում կան ուրիշ ակնարկներ, որոնց համաձայն նա ձեռքի տակ ունեցել է «այլև աստի և անտի՝ լուծումն բանից արարեալ մերոց իմաստնոց: Եւ էր զոր յայլ իմաստասիրական գրոց զյարմարն և զղէպն և զնմանն բերեալ եղաք ընդ համազարի բանին»: Այստեղ իշխում են երկու կարգի նյութեր. մեկում՝ քերականական երկերի վերաբերող նյութեր, իսկ մյուսում՝ իմաստասիրական այլ երկերից համապատաս-

³⁵ Н. Адоиц, *Узф. աշխ.*, էջ LXXXIX, ժամանակին Հովհաննես Երզնկացուն (Պլուզին) և Հովհաննես Սորոթեցուն (Երզնկացուն) սխալմամբ դիտում էին որպես մի հեղինակ: Այժմ նշված յարցում մտցված է պարզություն, ուստի մենք ես տարբերում ենք նրանց միմյանցից:

³⁶ Նույն տեղում, էջ CXI—CXVII:

³⁷ Նույն տեղում, LXXXIX:

խան քաղվածքներ:

Մեր կարծիքով, նշված առաջին խմբի նյութերի մեջ ախտի որոնել անծանոթ քերականից պահպանված բեկորներ: Սպասելի է, որ XIV օ. հենց սկզբներից այդ բեկորները հաճախակի արժանանային ընդօրինակման, ինչպես որ վկայում են 1317, 1342, 1360 և այլ թվականների վերահիշյալ ձեռագրերը:

Շաշորդ կարևոր փաստը, որ խոսում է անծանոթ քերականի առավել վաղ ժամանակների հեղինակ լինելու մասին, նրա խոսքի ընդհանուր ոգին է: Ինչպես տեսանք, նա երևան է եկել «կոփել» բայի խոնարհման աղյուսակի, «Յաղագս ոսից» հագելվածի, ընդհանրապես սաղաշափոթյան և քերականական այլ իրողությունների կապակցությամբ, իր խոսքը շարադրել է բողոքով, միաժամանակ տվել է նոր ու ծրագրային մեկնարանություններ: Այս բոլորը կարող էին այն ժամանակների ծնունդ լինել, երբ նոր էին հրապարակ իջնում և՛ «կոփել» բայը, և՛ «Յաղագս ոսից»-ը, և՛ մյուս թարգմանական գիտելիքները: Դրանց մեջ հեղինակի նկատած սխալները վերացնելու բուռն ձգտումն էր, որ նրան մղում էր տալու նոր օրինակ և հրասայաբար ասելու. «Այս է աւարտումն խաւսից...»: Հրապարակ իջնող «կոփել» բայի «բաօաղմունքների» առաջն առնելու նպատակով էր, որ նա հրահանգում, կարդաղորում էր հրածարվել նրանցից և պահանջում՝ համատեղ ջանքերով սասնաճարեալ գերիվար մտաց յարինեսցուր յասպարէզս իմաստից և առցուր դսպատակն ճշմարտութեան»:

Որպես մեր առաջ քաշած կարծիքը հավաստող վերջին փաստ կկամենայինք չրշել սաղաշափական տերմինների դավթյան համակարգում հասրուր և առգալտ հասկացությունների սխալ տեղաբաշխման օրինակը, որը միանգամայն ճիշտ է անծանոթ քերականի մշակած համակարգում ի դեմս լիարևս. մատու հակոտնյա գույզի: Անծանոթ քերականի կատարած այդ ճշգրտումը կոպտաշածեր հա: քերականական մտքի զարգացման սկզբնական ժամանակներին և ոչ թե հետագա յոթ դարերին, երբ արդեն բարացած զոգսայի տեսք էր ստացել դավթյան համակարգը, և ոչ ոքի մտողվ անդամ չէր անցնում մտածել նրա սխալ լինելու կամ այն շտկելու մասին:

ОБ ОДНОМ ДРЕВНЕМ ГРАММАТИЧЕСКОМ ТРУДЕ И ЕГО АВТОРЕ

АСАТУР МНАЦАКАНЯН

Резюме

В книге Н. Адонца «Дионисии Фракийский и армянские толкователи» (Петроград, 1915) приведена таблица спряжения глагола, которая до сих пор рассматривается как цельный труд, приписываемый неизвестному автору XIII—XIV вв. Однако указанная таблица представляет собой не цельный труд, а механическую совокупность отдельных

грамматических отрывков. Кроме отрывков спряжения здесь имеются и два других отрывка, один из которых касается понятия искусства, а другой—метрических понятий. Примечательно, что в других источниках нашлись новые варианты соответствующих отрывков с некоторыми дополнениями.

Изучение всех этих отрывков показывает, что их автором была написана целая книга по грамматике, из которой до нас дошли только вышеуказанные отрывки. К тому же выясняется, что автор грамматики жил не в XIII—XIV вв., а еще раньше, вероятно, в V—VI вв. Он пытался противостоять формирующемуся в то время в Армении грекофильскому направлению в грамматике, однако его попытки не увенчались успехом.

Автор потерянного труда разработал также новые грамматические термины. Сохранившиеся отрывки явствуют, что труд безымянного автора занимал исключительное место среди грамматических трудов, написанных в V—XII вв. в Армении.